

ԲՐՈԿԿՈԼԻԻ ՏԱՐԲԵՐ ՍՈՐՏԵՐԻ ԵՎ ՀԻԲՐԻԴՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՍԱՄՈՐՖՈԼՈԳԻԿԱՆ ԲԵՈՒԹՎՈՒՄ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՆՋԱՐԱՐՈՍՏԱՆԱԿԻՆ ԵՎ ԹԵԽՆԻԿԱԿԱՆ ԵՆՎԱԿԱՐՈՅՆԵՐԻ ԻՆՏԵՐՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

Շուկայական հարաբերությունների ներկա պայմաններում հրատապ է դարձել ավելացնել բնակչության կողմից օգտագործվող թարմ և վերամշակված բանջարային մշակաբույսերի տեսականին:

Վերջին տարիներին մեր կողմից մշակվում են նրբահամ, բարձր սննդային և բուժիչ հատկություններով օժտված ոչ ավանդական բանջարային մշակաբույսեր, որոնցից է բրոկկոլին, որը ծաղկակաղամբի մեկ այլ ենթատեսակ է: Իր սննդային և համային հատկություններով այն առանձնանում է կաղամբի մյուս տեսակներից: Ծաղկակաղամբին գերազանցում է 2 անգամ վիտամին C-ի, 1,5 անգամ սպիտակուցների և համքային աղերի և 50 անգամ կարոտինի պարունակությամբ: Այն պարունակում է մեծ քանակությամբ հակաօքսիդանտ վիտամին Ս: Աճողի մեջ օգտագործվում են ծաղկակիր ցողունները: Բրոկկոլին արժեքավորվում է նաև նրանով, որ իր կենսաբանական առանձնահատկությունների շնորհիվ այն կարելի է մշակել հանրապետության բոլոր գոտիներում:

Ուսումնասիրությունները կատարվել են 2007-2008թթ. Բանջարաբուստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոնի Դարակերտի փորձարարական տնտեսությունում: Ուսումնասիրվել են տարբեր սորտատիպերի պատկանող 11 սորտամուշներ, որոնք տարբերվել են կենսամորֆոլոգիական հատկանիշներով և վեգետացիոն շրջանի տևողությամբ: Վաղահաս են եղել Տոնուս, Միլեդի F₁, Արկադիա, Կորվետ F₁ սորտամուշները, որոնք վեգետացիոն շրջանի տևողությունը տևել է 75-83 օր: Մյուս սորտամուշները հիմնականում միջահասներ են, բացառությամբ Ֆիեստա F₁-ից, որը հանդես է եկել որպես միջաուշահաս: Ուսումնասիրված սորտամուշները տարբերվել են նաև կենսամորֆոլոգիական հատկանիշներով՝ բույսի բարձրությամբ, տերևների, գլխի մեծությամբ, զույնով, ձևով: Համեմատաբար բարձրած են եղել Green sprouting, Արկադիա, Մարաթոն սորտամուշները (70սմ): Կորվետ, Green sprouting, Արկադիա, Մարաթոն սորտամուշների գլխիկները կանաչ գույնի են, Տոնուս սորտի գլխիկները՝ մուգ կանաչ, իսկ Ֆիեստա F₁-ի գլխիկները՝ մոխրականաչավուն: Սորտամուշները տարբերվել են նաև գլխիկների ձևով, ամրությամբ, զանգվածով: Գլխիկների տրամագծով և զանգվածով աչքի են ընկել Ֆիեստա, Տոնուս սորտամուշները, որը և բերել է բերքատվության բարձրացմանը: Այս սորտամուշները, որոնք առաջարկվում են ներդնել ֆերմերային տնտեսություններում, հեկտարից ապահովում են, համապատասխանաբար, 280,5 և 265,0ցենտներ բերք:

Tadevosyan L.M., Hovhannisyan A.M.

ECONOMICAL AND BIOMORPHOLOGICAL CHARACTER OF DIFFERENT CULTIVARS AND HYBRIDS OF BROCCOLI

Scientific Centre of Vegetable and Technical Crops MA RA

Summary

11 variants of broccoli cabbage were studied in the years of 2007-2008 in experimental economy of Darakert of Scientific Centre of Vegetable and Technical Crops in different periods of sowing which were differentiated by their biomorphological characters and productivity.